



COMPTE-RENDU  
DU  
DISPENSARE ARMÉNIEN DE PARIS

---

Փ Ա Ր Ի Ջ Ի  
Հ Ա Յ Տ Ի Կ Ն Ա Ն Յ Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն  
Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Յ Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Ջ Ի  
Օ Գ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ



Բ Ո Ւ Ժ Ա Ր Ա Ն Ի  
Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն  
1936 Տ Ա Ր Ի Ո Յ



COMPTE-RENDU  
DU  
DISPENSARE ARMÉNIEN DE PARIS

---


Ժ Ա Ր Ի Զ Ի  
Հ Ա Յ Տ Ի Կ Ն Ա Ն Յ Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն  
Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Յ Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Զ Ի  
Օ Գ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Մ Ա Ս Ն Ա Ճ Ի Ի Ղ



Բ Ո Ւ Ժ Ա Ր Ա Ն Ի  
Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն  
1936 Տ Ա Ր Ի Ո Յ



ՏԻԿԻՆ ՆՈՅՆԻ Լ. ԳՈՓԱՄԱՃՆԱՆ  
Պատուական նախագահուհի  
Փարիզի Հայ Տիկնանց Միության



# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

## Ի՞ՆՉ Է ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ

Պատմութի՞ւնը կարմիր հաչին: Բայց նախապատմական է ան:

Ընկրկելով դարերու քաաւումը կ'երթայ կը յանգի մքին ժամանակամիջոցին, ուր քաղաքակրթութիւնը անժանօք էր:

Առաջին անգամ երբ գործով զեղուն հոգի մը հակեցաւ տառապողի մը ցաւին վրայ, առաջին անգամ երբ գութի շոյանքը մեղմեց տառապագին զլլտու մը կրակը, երբ արցունքի շիք մը ինկաւ ամառի նամբուն եզերքը օրհասական բախտագործի մը նակտին, այն բուպէէն իսկ գոյութիւն առաւ Կ. Խաչը:

Գրութեան, սիրոյ, անձնութիւնութեան խորհրդանշանը, հաչը. յետոյ եկաւ բերել անոր իր նուիրականութիւնը, իր հովանին տուաւ անոր իր երեք առաքինութիւններով:

Սպիտակութեան վրայ տարածուած չորս բեւերը կարմիր հաչին, բերես միակ իրական ժխտումն են մարդկային ահարկու եսասիրութեան:

Պիլնձէ արցունքը քշնամի զինուորին, այդ խաչը նակտին վրայ կրող կինը իր մատներովը կը սրբէ, չփնտռելով քէ ան բերես սպաննած է իր սիրականը, եղբայրը, կամ գաւակը, որովհետեւ գութը ներող է, որովհետեւ գութը ագութիւն չունի ինչպէս տառապանքը:

Սպանդի դաշտին վրայ այդ պգտիկ նշանը կարմիր՝ շատ

աւելի մեծ է քան բոլոր վիթխարի բնդանօթները, քան բոլոր կատարեւագործուած մարդաջինջ գործիքները. անոնք վրէժխնդիրներ են, Կարմիր Խաչը անյիշաչարն է, ամօփիչը, կենդանացնողը :

Ո՛ւր հնչէ ահագնգը, ո՛ւրկից անցնի աղէտ մը, ո՛ւր աւերումը, կործանումը, քանդումը, տարբերու շղթայագերծ գայրոյքը, ցաւագին տեսարաններուն մէջէն իսկոյն ի յայտ կուգայ Կարմիր Խաչը :

Մարդկային վայրագութիւններուն, բնութեան կործանումներուն մէջէն կանգուն է ան, իր քեռերը տարածած քշուառութիւններու վրայ :

Երկինքին մէկ շողն է աշխարհի անէծքներուն, անգրութիւններուն, տուայտանքներուն վրայ. շողը լուսատու եւ յուսատու, մտայլ յուսահատութիւններուն ետեւէն: Բարիքը երկնատուր՝ ի դերեւ հանող չարիքին յաղթանակը :

Ի՞նչ տպաւորիչ, աւելի յուզիչ է, երբ՝ խուռներաւ ամբոյսին մէջ մայրաքաղաքին, լոյսի խրախնամքի, նոյնիսկ շուայութեան ցուցադրութիւններուն մէջէն, յանկարծ կուգայ անցնիլ *ամպիւշանս* մը, իր Կարմիր Խաչովը, յամբագնաց: Սիրտերը սահ մը կը զգան սեղմում մը, փղձկում մը. փառայեղ տեսիլները, գուարքութիւնները կ'աներեւութանան. կը մնայ մարդկային ցաւը՝ յանձնուած Կարմիր Խաչին :

Մանուկները տխրած, անկող, պատժուածներ, անոր գրկին մէջ կը փնտռեն կազդուրում իրենց անտաժէտ յօրինուածքին, իրենց վատուծ բոքերուն կ'որոնեն հիւրը կենսատու, կեանք, լոյս, բուժում :

Եւ համայնութիւն տարաբախտները չքաւոր, զրկուածներ խուռներաւ, սոսկ նշոյլով մը սրտերնին լուսաւորուած, յետին առկայծումով մը արիացած կը դիմեն դէպի այն սրահները սայտակ, լեցուն փոքրիկ սրուակներով եւ մեծ հոգիներով որ կը կոչուի ԲՈՒԺԱՐԱՆ, եւ որ միշտ քեւարաց կ'ըն-

դունի ցաւահար մարդկութիւնը ու կը տֆնի զայն կազդուրե-  
լու :

Նդիշէի ներբողած «Հայոց աշխարհի» բամբիշներէն ,  
Շուշանիկ իշխանուհիէն մինչեւ ժամանակակից քագուհիներ-  
ը , փարքամ տիկիները , որոնք մէկ ոստումով ոտնակոխ ը-  
րին իրենց զարդերը եւ նակատուն առին ներմակ ֆողը վը-  
րան պաշտելի խորհրդանշանը անձնագոհութեան , մեծ սպան-  
դինատեն , ինչպէս աշխատող կիներ իր փորձառու հոգատա-  
րութեամբ , ինչպէս գործաւորին մանկունակ ազջիկը որ իր  
այլասիրութեան սգածը ըրաւ այդ փոքորկի տարիներուն ,  
ինչպէս գիտուն բժիշկը իր անգնահատելի առաջնորդու-  
թեամբ , մտոցած հանգիստն ու աշխարհի միւս կեանքը , հա-  
ւաքուած տանջանքներու , ցաւի , արիւնի , ջարդուփշուր  
մարմիններու առջեւ հրաշալի օրինակը տուին նուիրումի ,  
հաւատարութեան ու սիրոյ :

Համաշխարհային բանակ մըն է կարմիր խաչը , աւելի հզօր  
քան Մեծն Աղետանդրի , Ադիլլայի , Նափօլէոնի բանակները .  
հզօր ու աննուան , որովհետեւ նպատակը չէ աշխարհակա-  
լութիւն , քարուքանդ , այլ տիրապետութիւնը մարդասիրու-  
թեան , եղբայրասիրութեան եւ գութի գեղեցկութիւնը աստ-  
ուածային :

ԱՆԱՅԻՍ



ՏԻՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՅ ԱՆՅԱՄՆԵՐԷՆ ԲԱՂԿԱՅԱԿԻ ԽՄԲԱՆԿԱՐ ՄԲ. 1937 ԿՆ  
 Զախէն գէպի աջ, Կառէի կարգին վրայ՝ Տիար Վահան Կամէրեան, Տիկին Ա. Համբարձումեան, Տիկին Ս. Բալյան, Տիար Ա. Համբարձումեան, Տիկին Լ. Նուրիան, Օր. Զ. Գալփայեան Տիար Գ. Բարսեղեան  
 Աջէի կարգին վրայ՝ Նասած՝ Տիկնայի Վ. Զարմիկեան, Գ. Կամէրեան, Ա. Ճեվսիքեան,  
 Մ. Կիւրպեան, Հ. Միբայեան և Տօր. Գ. Փայեան



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ  
 ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՃԻԴԻՆ ՊԱՏՄԱԿԱՆԸ ԵՒ  
 ՓԱՐԻԶԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՆԵՐՈՒ ՄԱՍՆԱՃԻԴԵՐԸ

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան Պետական Հ. Կարմիր  
 Խաչի Օգնութեան Մասնաճիւղը կազմուած է 1922 Ապրիլ  
 28ին :

Անկէ առաջ, Փարիզի մէջ, առաջին անգամ Կարմիր Խաչ  
 անունով անկախ կազմակերպութիւն մը մարմին առած է  
 1920 Մարտ 7ին, որ երկուր կեանք չէ ունեցած եւ դադրած  
 է 1921 Յունիս 19ին :

1921 Յունիս 24ին, նոր փորձ մը եղած է վերակազմե-  
 լու Կարմիր Խաչի անկախ մարմինը՝ որ ցրուած էր, բայց  
 այս փորձն ալ ձախողած է, առանց բուժարան ունենալու :

Երեւանէն եկած մասնաւոր հրահանգի մը համաձայն,  
 որուն բնագիրը կը մնայ մեր դիւանաթուղթերուն մէջ,  
 28 Ապրիլ 1922ին, Կարմիր Խաչը վերջնականապէս կազ-  
 մուած է՝ միանալով Փարիզի Հայ Տիկնանց Միութեան, իբր  
 անոր մէկ Մասնաճիւղը, եւ կոչուած է՝ Պետական Հ. Կար-  
 միր Խաչի Օգնութեան Մասնաճիւղ՝ Փարիզի Հայ Տիկնանց  
 Միութեան, որ Պետութենէն ճանչցուած է իբր Oeuvre de  
 Guerre № 20.588 :

1922էն մինչեւ 1934, Կեդրոնական այս Մասնաճիւղը ու-  
 նեցած չէր իր Օժանդակ Մասնաճիւղերը :

1934 Յունուարին, առաջին անգամն ըլլալով, Փարիզի  
 արուարձաններէն Enghien-les-Bains ի մէջ կազմուեցաւ ան-  
 գրանիկ Մասնաճիւղը :

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՏՁՀԵՏԷ ԿԱԶՄՈՒԱՅ  
ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐՈՒ ՄԱՍԻՆ

1.— ՄԱՍՆԱՃԻՒՂ Enghien - les - Bains ի.— Ինչպէս  
ըսինք, կազմուած առաջին Օժանդակ Մասնաճիւղը, Անկիւ-  
նի Մասնաճիւղն է, որ կը դործէ երեք տարիէ ի վեր :

Իր դործունէութեան շրջանակն է

Enghien, Montmorency, Soisy, Deuil, La Barre :

Ունի 65 անդամ : Կը կազմակերպէ դասախօսութիւններ,  
թէյյասեղան եւ տարեկան պարահանդէս :

Այս Մասնաճիւղը իր դրամական օժանդակութիւնը կը  
բերէ Կեդրոնին ամէն տարի կանոնաւորապէս :

Այս Մասնաճիւղին Գիւանին հասցէն է՝

Տիկին Գ. Բարունակեան, Ատենապետուհի

192, Route de St. Loue, Montmorency (S. et O.)

2.— ՄԱՍՆԱՃԻՒՂ Bagneux-Cachan ի.— Այս Մասնա-  
ճիւղը կազմուեցաւ 1935 տարւոյ Մարտին. իր բացման հան-  
դէսը կատարուեցաւ 2 Յունիս 1935ին :

Իր դործունէութեան անմիջական շրջանակներն են՝  
Bagneux, Cachan եւ անոնց մօտիկ զիւղաքաղաքները :

Իր անդամներուն թիւն է 40 :

Այս Մասնաճիւղը յաջողած է ունենալ իր սեփական Բու-  
ժարանը, ուր կը դրամանուին տեղական հիւանդներն, որոնք  
երբեմն կը ստանան նաեւ դրամական համեստ օժանդակու-  
թիւններ :

Բուժարանին այցելու բժիշկն է՝ Տոքթ. Կ. Կէօլճեան,  
որ շարաքին անդամ մը կ'այցելէ եւ կը կատարէ իր բժշկական  
սպասարկութիւնը՝ պատասխանատուութեամբ Փարիզի Բու-  
ժարանին բժշկապետ Տոքթ. Պօղոս Քօլօլեանի :

Հիւանդներուն դեղերը կը հայթայթուին Փարիզի Կեդ-  
րոնական Բուժարանէն՝ ձրիարար :

Պանէէօ - Քաշանի Մասնաճիւղը, մերթ ընդ մերթ կը բե-

բէ նաև իր օժանդակութիւնը՝ Կեղրսնին՝ գրամական առարուժներով :

Մասնաճիւղին Դիւանին հասցէն է՝ Տիկին Մ. Վարպետեան, 32, Grand' Rue, Bourg - la - Reine (Seine).

3.— ՄԱՍՆԱՃԻԻՂ Paris-Belleville ի.— Այս Մասնաճիւղը կազմուեցաւ 1935 տարուոյ (Մայիս 11) սկիզբներէ՝ բացման հանդէսով մը :

Իր գործունէութեան դաշտն է Փարիզի 19րդ և 20րդ թաղամասերը :

Այս Մասնաճիւղը, որուն կ'անդամակցին կարեւոր ասորբեր, պարագաներու և անձնական արգելքներու հետեւանքով դեռ չէ կրցած իր գործունէութեան ազատ ընթացք տալ . բայց ի նկատի ունենալով այն անունները, որոնց վաստակուած է այս Մասնաճիւղին Վարչութիւնը, մեծ յոյս կուտայ որ մօտ առնէն աւելի առոյգ գործունէութիւն մը պիտի ունենայ :

Դիւանին հասցէն է՝ Տիկին Ե. Աւետիսեան,  
56bis, Rue Olivier Métra, Paris (19°).

4.— ՄԱՍՆԱՃԻԻՂ Asnières-Bois Colombes ի.— Այս Մասնաճիւղը կազմուած է 22 Մարտ 1936ին և իր բացման հանդէսը կատարուած է 24 Յունիս 1936ին :

Իր գործունէութեան շրջանակներն են՝

Asnières, Bois-Colombes, Colombes, Courbevoie, Bécon-les-Bruyères :

Իր անդամներուն թիւն է 55 - 60 :

Այս Մասնաճիւղը կազմուած է գործունեայ և սրտի տէր ազնիւ հայուհիներէ, որոնք իրենց շրջանակի աղքատ հիւանդներուն հանդէպ ունեցած են զնահատելի ծառայութիւններ : Իր ծրագրին մէջ է Բուժարանի մը բացման խընդիրը :

Դիւանին հասցէն է՝ Տիկին Վարդանոյ Տէր - Մինասեան,  
84, Rue des Chambards, Bois - Colombes (S.).

5.— ՄԱՄՆԱՃԻԻՂ Italic-Gentilly-ի.— 1937 Յուն-  
ւար 10ին ձեռնարկուած է այս Մասնաճիւղին եւ բացման  
հանդէսը կատարուած է 21 Մարտ 1937ին :

Իր գործունէութեան շրջանակն է՝ Փարիզի 13րդ թա-  
ղամասը, Kremlin - Bicêtre, Bicêtre, Gentilly :

Իր անդամներուն թիւը կը հասնի 65 - 70ի :

Մասնաճիւղը կազմող Տիկիմներն ու Օրիորդները ունին  
բարի տրամադրութիւն աշխատելու եւ կամք : Այս Մասնա-  
ճիւղն ալ ծրագրած է Բուժարանի մը բացումը : Ան ալժմ կը  
գրադի տկարակազմ եւ վատուժ մանուկներու օգտօրոյ-  
թեան խնդրով, որուն համար բրած է ամէն գնահատելի  
ձեռնարկ :

Դիւանին հասցէն է՝ Տիկին Մարի Ղազարեան ,

8, Rue Coppel, Paris (13<sup>e</sup>).

6.— ՄԱՄՆԱՃԻԻՂ Issy-les-Moulineaux - Clamart-ի,  
որուն կազմութեան ձեռնարկուեցաւ 1937 Փետր., Մարտ եւ  
Ապրիլ ամիսներուն մէջ. բացման հանդէսը կատարուեցաւ  
1937 տարւոյ Յունիս 26ին :

Իր գործունէութեան շրջանակն է Issy-les-Moulineaux  
եւ Clamart ու անմիջական հայարնակ կեդրոնները :

Իր անդամներուն թիւը կը հասնի 60ի :

Այս Մասնաճիւղին մեծ խանդավառութեամբ փարած են  
կարգ մը պնուասիրտ Տիկիմներ եւ Օրիորդներ, որոնք ա-  
ռաջադրած են տալ իրենց Մասնաճիւղին նախանձելի վի-  
ճակ մը : Կը փափաքին՝ հոս ալ Բուժարան մը ունենալ :

Դիւանի հասցէն է՝ Տիկին Զապէլ Աւետիսեան, Ատենա-  
պետուհի, 10, Allée Yvonne, Clamart (S.).

7.— ՄԱՄՆԱՃԻԻՂ Marseille - Saint Antoine-ի, ո-  
րուն կազմութեան ձեռնարկուեցաւ 1936 Սեպտեմբերին եւ իր  
վերջնական ձեւն ստացաւ 1936 Հոկտեմբերի սկիզբները :  
Բացման հանդէսը կատարուեցաւ 25 Հոկտ. 1936ին :

Խումբ մը հայրենասէր եւ բարեսէր հայ օրիորդներ,

16էն 18 տարեկան, նախաձեռնարկ եղած են այս Մասնաճիւղին կազմութեան եւ իրենց անդրանիկ օժանդակութիւնը բերած են Կեղրոնին զբաղան ձեւով մը. ա՛յն է՝ իրենց Մասնաճիւղին նախախաչիքը՝ 567 Քրանքի գումար մը զրկելով Փարիզի Կեղրոնին:

Շնորհաւորելի է խկապէս այս օրիորդներուն նախաձեռնարկ ուղին եւ անձնուէր աշխատութիւնը, որով ո՛չ միայն կը ջանան լաւ հիմերու վրայ դնել Սէնթ - Անթուանի այս Մասնաճիւղը, այլ եւ իրենց քաղաքին միւս արուարձաններուն մէջ եւս կ'աշխատին հիմնելու նոր Մասնաճիւղեր:

Անդամներուն թիւն է 30:

Դիւանին հասցէն է՝ Տիկին Կ. Ազարեան, Ատենապետուհի, № 10, Campagne Merlin, St. Antoine, Marseille

(B. du R.)

8.— ՄԱՍՆԱՃԻԻՂ Marseille - Bld. Oddo ի, կազմուած 14 Մարտ 1937ին, նախաձեռնութեամբ Սէնթ - Անթուանի Վարչութեան:

Այս Մասնաճիւղը, իբր քոյր Մասնաճիւղ Սէնթ - Անթուանի, կը խոստանայ իր լաւագոյն ճիւղերը միացնելու Կեղրոնին՝ մեծ խանդավառութեամբ:

Իր անդամներու այժմու թիւն է 25:

Դիւանին հասցէն է՝ Օր. Մարգարիտ Չաքրեան, Ատենապետուհի, 9, Traverse de la Cabucelle,

Campagne Nègre, Marseille (B. du R.).

9.— ՄԱՍՆԱՃԻԻՂ Marseille-Campagne Fraise-ի, կազմուած 18 Մարտ 1937ին՝ նախաձեռնութեամբ Սէնթ - Անթուանի Վարչութեան Դիւանին:

Այս Մասնաճիւղն ալ խանդավառուած է՝ իր միւս քոյր Մասնաճիւղերուն նման:

Փարիզի Կեղրոնական Վարչութիւնը կը զբաղի Մարտէյլի վերոյիշեալ երեք Մասնաճիւղերուն զօրացման գործով: Անդամներու թիւն է 10:

Դիւանին հասցէն է՝ Օր. Ալնիւ Պօղոսեան, Ատենա-

պետուհի, № 2, Campagne Fraise, Marseille (B. du R.).

**ԾԱՆՈԹ** — Վերջին պահուն անուած տեղեկութեանց համաձայն՝ այս Մասնաճիւղը ձուլուած է Սէնր - Անրուանի Մասնաճիւղին հետ :

— Այս Մասնաճիւղերէն զատ կազմակերպուելու վրայ են նաեւ ուրիշ երկու նոր Մասնաճիւղեր ալ, որոնց մասին դեռ կը պակսին մեզ լրացուցիչ տեղեկութիւններ :

**Փարիզի Կեդրոնական Վարչութիւնը հոգ կը տանի, որ կազմուած նոր Մասնաճիւղերը յարաբերութեան մասնէն իրարու հետ եւ այս նպատակաւ կը հազարդէ իւրաքանչիւր Մասնաճիւղի Գիւանի հասցէն՝ իր Ատենապետին անունով :**

**Մասնաճիւղերու գլխաւոր պարտականութիւնն է՝ ջանալ աւելցնելու իրենց անդամներուն թիւը, օգտակար ըլլալ աղքատ հիւանդներուն, օժանդակել Կեդր. Վարչութեան նիւթապէս ու բարոյապէս եւ Հայաստանի Պետ. Կ. Խաչին օգնել՝ դեղ, բժիշկ, գործիք եւ բժշկ. գիրքեր ու հանդէսներ զրկելով :**

**Կեդրոնը ներկայացուցիչներ կ'ուզարկէ՝ երբ Մասնաճիւղերը հանդէսներ կազմակերպեն : Մասնաճիւղերու պարտականութիւնն է նաեւ օգնել իրարու՝ հանդէսներու կազմակերպութեան միջոցին եւ ներկայ ըլլալ այդ հանդէսներուն, եթէ ու եւ է արդելիչ պատճառ չունին :**

**Գիտելի է որ, Անկիէնի անդրանիկ Մասնաճիւղին կազմութենէն անմիջապէս յետոյ, շնորհաւորելի նախանձայնազութիւն մը ծայր տուած է Փարիզի, շրջակայից, ինչպէս նաեւ Մարտէյի հայ կեդրոններուն մէջ, Պետական Հ. Կարմիր Խաչի Մասնաճիւղեր ստեղծելու եւ այս՝ առանց Կեդրոնին թախանձանքին, թեյազրութեան կամ յանձնարարութեան, այլ՝ ինքնարերարար. այնպէս որ 1934էն մինչև 1937, ունեցած ենք ԻՆՆՄ Մասնաճիւղեր, բացի Կեդրոնի Պետ. Հ. Կարմիր Խաչի Օգնութեան Մասնաճիւղէն :**

Ընդհ. Քարտուղար

Փարիզի Պետ. Հ. Կարմիր Խաչի Օգն. Մասնաճիւղի

Գ. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ

## Ի՞ՆՉՊԷՍ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԻՆ ՄԱՍՆԱՃԻՂԵՐԸ

Երբ՝ ու եւ է հայաշատ կեղրոնի մը մէջ Մասնաճիւղ մը կազմակերպելու փափաք կը յայտնուի, նախաձեռնարկ եղողները պէտք է գրով մը հրահանգ ուղեն կեղրոնի Վարչութիւնէն:

Կեղրոնի Վարչութիւնը իր տրամադրութեան տակ ունի կարգ մը տպեալ բանաձեւեր, ի մէջ այլոց՝ խորհրդակցական ժողովի համար մասնաւոր բանաձեւ մը՝ ստորագրուած կեղրոնի Վարչութեան Դիւանէն՝ որուն վարի մասին վրայ՝ ծակոսակէն զիծով մը (pointillé) անջատելի փոքր մաս մը կայ: Այս փոքր մասը, յանձնառագրի բանաձեւ մըն է, զոր խորհրդակցական ժողովի մասնակցոց ամէն անձ՝ կրնայ լեցնել, ստորագրել եւ փրցնելով զրկել ցոյց տրուած հասցէին:

Խորհրդակցական ժողովին մէջ, առաջին անգամ կը կազմուի առժամեայ Յանձնախումբ մը, որ կը հրաժարի անմիջապէս՝ երբ տեսական Վարչութիւն մը նշանակուի:

Այս կերպով կարելի կ'ըլլայ զիտնալ որոշապէս թէ՛ ո՞րքան անդամներ կան բաժնեզին վճարող եւ որոնցմէ՞ կազմուած է Վարչութիւնն ու անոր Դիւանը:

Վարչութիւնը կազմուելէն յետոյ, կեղրոնը կը տրամադրէ Մասնաճիւղին՝ հետեւալ տպեալ բանաձեւերը.

ա. — Նամակազուխով նամակի թուով

բ. — Ժողովի հրաւիրագիր

գ. — Անդամաքարտ

դ. — Բաժնեզիններու դանձումը զիւրացնող 1, 2, 3, 4 եւ

5 ֆրանքնոց զրոշմամբղթեր:

Վարչութիւնը Մասնաճիւղին՝ կ'ունենայ իր սեփական կնիքը, քառչուքէ շինուած, որուն խմբագրութիւնը կը կատարէ կեղրոնը միօրինակութեան համար:

Այս կնիքը կը պարունակէ իր մէջ՝ հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով՝ հետեւեալ բանաձեւեր .

Փարիզի	Union des Dames Arméniennes
Հայ Տիկնացի Միութեան	de Paris
. . . . . ի Մասնաճիւղ	Section de . . . . .
( քուակաւ )	(année)

Կազմուած ամէն Մասնաճիւղի Վարչութիւն պարտաւոր է տեղեկագրել անմիջապէս Կեդրոնին իր կազմութիւնը, իր Վարչութիւնն ու Դիւանը կազմողներու անուններն ու հասցէները :

Մասնաճիւղերու Վարչութիւնները իրենց հրահանգները կը ստանան Կեդրոնէն, որ ունի իր մնայուն Ընդհանուր Քարտուղարութիւնը եւ որուն հասցէին պէտք է ուղղուին ամէն նամակ կամ գրութիւն :

Արտաքին յարաբերութեանց համար Կեդրոնական Վարչութեան հետ խորհրդակցիլ անհրաժեշտ է՝ ի վերջոյ չիյնալու համար անդարմանելի սխալներու մէջ :

Մասնաճիւղերը, որոնք Պետական Հ. Կարմիր Խաչի անունը կը կրեն, պէտք չէ՝ մոռնան թէ՛ անկախ չեն . այլ՝ կապուած են Կեդրոնին :

Կեդրոնն ու Մասնաճիւղերը մաս կը կազմեն ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ, որ Ֆրանսական Պետութենէն ճանչցուած է իրր **ŒUVRE DE GUERRE** այսինքն՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹՇՈՒԱՌՈՒԹԵԱՆՑ ԹԳՆՈՂ ՄԱՐՄԻՆ, եւ ունի իր որոշ ստանձնաշնորհումները . օրինակի համար, հանդէսներու առթիւ՝ Աղքատաց ասուրքը (Droit des pauvres), ինչպէս նաեւ երաժշտական հեղինակներու ասուրքը (Droit d'auteurs) զեղչեալ են 75 % :

Այս պատճառաւ հարկ է որ ամէն Մասնաճիւղ, իր անունէն առաջ գնէ Փարիզի Հայ Տիկնացի Միութիւն անունը եւ Oeuvre de guerre թիւը՝ որ է 20-588 :

Փարիզի Հայ Տիկնացի Միութիւնը հիմնուած է 1913



Մայիսին . ալիսինքն՝ 24 տարուան անընդհատ զործունէութիւն մը ունի . ուրիշ հայ համահուն Միութիւններուն մէջ, Փարիզի Հայ Տիկնանց Միութիւնն է միայն , որ ունեցած է Oeuvre de guerre կոչուելու ասանձնաշնորհումը :

Կեդրոնը եւ նորակազմ Մ/նիւղերը պարտաւոր են իրենց կազմութիւնն ու գործունէութեան բնոյթը հաղորդել իրենց կեդրոնատեղւոյ Թաղապետութեան (Mairie) եւ Ոստիկանապետութեան (Commissariat), յաջորդ պատճառակալան նամակներով :

Վիճակահանութեան տոմսերու հրատարակման , հանդանակութեան ձեւնարկումի եւ այլ նման պարագաներու մէջ , երկրին օրէնքին ղէմ զործած չըլլալու համար , անւրբ չ'ըլլար խորհուրդ հարցնել Կեդրոնական Վարչութեան , որ պատրաստ է ամէն կերպով զոհացնելու խնդրարկու Մասնաճիւղերը :

Ամէն Մասնաճիւղի Վարչութիւն պարտաւոր է իր կազմակերպելիք հանդէսներուն առթիւ՝ կանխօրօք ղիմում ընել Կեդրոնին՝ անոր տեղեկացնելով հանդէսին տեսակը , թուականը , վայրը , յայտագիրը եւ նախագահելիք անձին ինչպէս նաեւ բանաբոս անձին անուաները :

Պատշաճից համաձայն է՝ կատարուելիք հանդէսներու առթիւ՝ հրաւէր ուղղել Կեդրոնական Վարչութեան եւ բոլոր քոյր Մասնաճիւղերուն :

Կեդրոնը , եւ անոր հետ՝ բոլոր քոյր Մասնաճիւղերը՝ համաձայն պատշաճութեան օրէնքին՝ պարտաւոր են իրենց ներկայացուցիչները ուղարկել հանդէս ունեցող Մասնաճիւղին՝ առ ի իրախոյս , ի քաջալերութիւն եւ առ ի յարգանս :

Բոլոր Մասնաճիւղերը օժանդակութիւն եւ ձեւնատուութիւն կը պարտին իրարու եւ ջանադիր պէտք է ըլլան որ , կարելի եղած բարոյական եւ երբեմն ալ նոյն խոկ նիւթական օգնութիւնն ընեն հանդէս կազմակերպող իրենց քոյր

Մասնաճիւղին. զոր օրինակ, հրապարակ հանուած ասոսե-  
րը տեղաւորել, բրորականք ընել, եւայլն, եւայլն :

Իւրաքանչիւր Մասնաճիւղի կը տրամադրուի որոշ թի-  
ւով ձարմանիչներ (insignes) կամ զարդակոնականեր՝ կար-  
միր խաչի նշանով :

Այս ճարմանդները Մասնաճիւղին սեփականութիւնը կը  
մնան եւ Վարչական ժողովոյ անդամներ'ը միայն կրնան  
զործածել՝ իրենց լամբակին վրայ՝ երբ հանդէս մը ունենան  
կամ երբ՝ իբր ներկայացուցիչ՝ ներկայ ըլլան ուրիշ Մասնա-  
ճիւղի մը հանդէսին :

ձարմանդները՝ հանդէսներէ դուրս՝ ներկի չէ կրել :

Մասնաճիւղերու Վարչութեանց Գիւանները, իրենց  
պաշտօնական թղթակցութեանց մէջ, պարտաւար են զոր-  
ծածելու Մասնաճիւղին յատուկ պաշտօնական նամակա-  
թուղթերը :

Նամակները պէտք է միշտ ստորագրուին Ատենապետին  
եւ Ատենապետիին (զոյգ ստորագրութիւն) կողմէ եւ կնքուին  
Մասնաճիւղին սեփական կնիքով :

Միայն մէկ հոգիի ստորագրութիւնը կրող եւ ասանց  
կնիքի զրկուած գրութիւնները պաշտօնական հանգամանք  
չեն կրեր, հետեւաբար եւ անվաւեր կը նկատուին :

Մասնաճիւղերու անդամներուն կողմէ կեդրոնական  
Վարչութեան եղած բերանացի յայտարարութիւն, նպաս-  
տաւոր կամ աննպաստ, անլսելի կը մնան : Ո՛ր եւ է բողոք կամ  
զանգատ եւ կամ ո՛ր եւ է նպաստաւոր տեղեկատուութիւն ան-  
լսելի կը մնան, եթէ անոնք հաղորդուած չեն կեդրոնին՝ Գի-  
ւանի ստորագրութեամբ եւ կնիքով, պաշտօնական գրու-  
թեամբ մը :

Գիւանին դէմ եղած բողոքներն ու զանգատները կեդրո-  
նին հաղորդելու ընոյթ ունեցող գրութիւնները պէտք է կրեն  
Մասնաճիւղին անդամներուն ստուար մեծամասնութեան  
ստորագրութիւնը :

Մասնաճիւղերը պարտաւոր են՝ ամէն տարւոյ Դեկտեմբերի 31ին պատրաստելու իրենց վարչական եւ մատակարարական գործունէութեան ամփոփ մէկ տեղեկագրութիւնը եւ զրկել զայն Կեդրոն՝ ստորագրուած եւ կնքուած Դիւանի անգամներուն կողմէ :

Այս տեղեկագիրը պէտք է պարունակէ նաեւ հաշուական գործառնութիւնները, տարեկան անջատ մուտքերն ու ելքերը եւ պատրաստ գրամի քանակը : Նոյնպէս, այս տեղեկագրին պէտք է կցուի Մասնաճիւղին բաժնեվճար անդամներուն ցանկը, ամէն տարւոյ վերջը՝ նշանակելով պակասձեւում նորագիր անգամներուն անունները, ինչպէս նաեւ Վարչութիւնը բաղկացնող անդամներու անունները՝ իրենց պաշտօններով :

Մասնաճիւղերը պէտք է ունենան հետեւեալ տոմարները .

ա. — Անդամատեար մը, ուր իւրաքանչիւր բաժնեվճար անդամ պէտք է ունենայ իր սեփական թիւը : Հրատարած առեւն՝ հրատարող անդամին անունն ու թիւը միասին կը ջնջուին : Հրատարող անդամին սեփական թիւը ուրիշ անդամի պէտք չէ սալ :

բ. — Անդամներու վճարումները ցոյց տուող ցանկ մը :

գ. — Մնասկի հաշուետումար մը, ուր կը նշանակուին օրը օրին՝ մուտքերն ու եկած ծախքերը՝ իրենց փաստաթղթերով :

դ. — Ժողովներու առեւագրութեանց տումար մը, ուր մաքուրի կը զրուին բոլոր ժողովներու առեւագրութիւնները՝ ստորագրուած Դիւանին կողմէ :

ե. — Նամակներու ընդօրինակութեան տումար մը, ուր կ'ընդօրինակուին զրկուած նամակները՝ իրենց համարաթիւով : (Ղրկուած նամակները պէտք է թուագրուին կարգաթիւով մը) :

Ընդհ. Քարտուղար

Պետ. Հ. Կարմիր Խաչի Օգն. Մասնաբնիկի

Գ. ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ



Բժշկական փննութիւն մը բոնիօքսնին մէջ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՓԱՐԻԶԻ ԲՈՒԺԱՐԱՆԻՆ

Փարիզի Հայ Պետական Կարմիր Պաշխի Բուժարանին գործունեությունը ու իր ունեցած օգտակարությունը արդէն ծանօթ է փարիզահայ գաղութին :

Բուժարանը վաղ մըն է՝ ուր ազատ հիւանդներ կը զբաւենն ճրխարար բժշկական ամէն դարման ու զեղ :

Բուժարանին քննութիւնները կը կատարուին կանոնաւորարար շարաքր երկու անգամ, Երկուշաբթի եւ Ուրբաթ առաւօտները, ամէն անգամ միջին հաշիւով 45 հիւանդ քըննելով :

Սոյն Բուժարանը միայն մասնագիտական վաղ մըն է, ինչպէս այլ Բուժարանները, որոնք յատկացուած են միայն թոքախտաւորներու կամ վիներախտաւորներու : Այլ կատարեալ բուժարան մըն է, զոր կարելի է կոչել Բազմախտարան (polyclinique), ուր կուզան բուժուելու ամէն տեսակ հիւանդներ (երախաններ, երիտասարդներ եւ ծերեր) :

Այս բժշկական քննութիւնները կը կատարուին բժշկապետ Տօքթ. Քօլօլեանի հովանաւորութեան տակ եւ աջակցութեամբ Փարիզի Հայ Բժշկական Միութեան անգամ բժիշկներուն, որոնք անձնուիրարար կը կատարեն իրենց պարտականութիւնը, ի զործ զննելով իրենց մասնագիտութիւնները :

Ահա՛ Բուժարանին բժշկական կազմը .

Բժշկապետ Տօքթ. Քօլօլեան

Մնայուն բժիշկ Տօքթ. Կ. Կէօլմեան

Մնայուն զեղապործ Կ. Բասմաջեան

ևւ վեց անձնուէր բժիշկներ՝

Տօբթ . Խանութան

« Կարապետեան

« Տէր – Անդրէասեան

« Ֆիննի

« Թարաքեան

« Աղաջանեան Որդի

որոնք յօժարակամ կու գան իրենց կարգին ամիսը մէկ կամ երկու անգամ, սիրով մասնակցելու Բուժարանի քննութեանց :

Երբ Հարկ տեսնուի, կարգ մը հիւանդներ, անոնց ախտաճանաչութիւնը ու դարմանումները կատարուելու համար, կը զրկուին Փարիզի հիւանդանոցներու բժշկապետներուն, որպէսզի անոնց միջոցաւ կատարուի, Բոնիֆիկէնեան ճառագայթներով եւ Թուքի ու արեան վերլուծումներով անհրաժեշտ քննութիւնը :

Բուժարանին զործունէութեան իրենց անձնուէր աջակցութիւնը կու տան նաեւ վեց պոնիւ Տիկիներ եւ Օրիորդներ՝

Տիկին Զարմիկեան, ընդհ . կարգապահութեան համար .

Տիկին Պ . Բասմաջեան, ղեկերու բաշխումին համար .

Տիկին Նուրիեան

Օրիորդ Մալէգեան

Օրիորդ Բուլբեան

Օրիորդ Զ . Գալփայեան, այցելու :

} արձանագրութեանց պաշտօնով .

Հակառակ այս զեղեցիկ կարգադրութեան ու կարգապահութեան, երբեմն Բուժարանին թափած ջանքը ի զուր կը դառնայ՝ երբ կը տեսնուի որ տրուած խրատները ու յանձնարարութիւնները չեն ըմբռնուած եւ կամ հիւանդներուն անկարելի երեւցած է, եւ բժիշկը կը վշտահարի երբեմն տեսնելով որ իր ջանքերը անօգուտ դարձած են : Ասեկնք օրինակ մը .

Մանուկ մը սովորյն է, անարիւն, չի մեծնար, լաւ չի մարսեր յաճախ ցնցղատապի ենթակայ. Բուժարան կը դիմէ, բժիշկը կը խրատէ առատ ու մաքուր օդ ու լաւ սնունդ, կը յանձնարարէ դիւղի մէջ բնակիլ. խրատը զիւրին է տալ, բայց Ինչպէս իրազործելու է :

Այժմ ներկայացնենք Բուժարանին տարեկան դործունէութեան մէկ համառօտ պատկերը :

Անցեալ 1936 տարուան ընթացքին Բուժարանը կատարած է 5194 բժշկական քննութիւն : Կատարուած քննութիւնները երեւան հանած են .

1.— Շնչառական գործարանի հիւանդութիւններ .

407 ախտաճանաչում, 356ը ցնցղատապ, 28ը թոքախտ եւ մնացեալ 23ը թոքային զանազան հիւանդութիւններ :

2.— Մարսողական գործարանի հիւանդութիւններ .

472 ախտաճանաչում, 144ը ստամոքսի, 294ը աղիքներու (բորբոքում, սնդուքիւն, կուրաղիք, ճճի եւայլն) եւ 34ը լեարդի հիւանդութիւններ :

3.— Արեան շրջանի գործարաններու հիւանդութիւններ .

195 քննութիւններ, 100ը արեան գերճնչում, 41ը թութք, 33ը երակային եւ արեան շրջանի զանազան խանգարումներ :

4.— Ընդհանուր տկարութիւն եւ անարիւնութիւն .

132 պարազայ :

5.— Մանուկներու հիւանդութիւններ .

172 ախտաճանաչութիւն :

Կարելոր տեղ կը բռնեն փոքրերու փորհարութիւնը, սննդականոնի թերացման հետեւանքով մարսողական զանազան խանգարումներ, թերի սննդառութիւններ, սակրաթութիւն (28 պարազայ), փոխանցիկ հիւանդութիւններ (սորնց միայն 19ը կապոյտ հազ), եւ պատուաւատ (2 պարազայ) :

6.— Տարախոսիկ հիւանդութիւններ .

67 պարազայ (կրիփ, ջերմախտ եւայլն) :

7.— Յօդացաւեր . 214 *պարագայ* :

8.— Մորբային հիւանդութիւններ . 112 *պարագայ* :

9.— Զղային դրութեան կապուած հիւանդութիւններ .

166 *ախտաճանաչութիւն*, *որոնց միայն* 38ը *պարզ*  
*զլխացաւեր* եւ 6ը *փարքէնսոն* (parkinson ou paralysie  
agitante) :

10.— Երիկամուսքի եւ միզային նամբաներու

հիւանդութիւններ . 54 *պարագայ* :

11.— Վեներական ախտեր .

*Զերմամիզութիւն* 10 *պարագայ*, *Ֆրանկախտային զէպ-*  
*քեր* 9 *պարագայ* :

12.— Կանանց սեռային գործարաններու հիւանդութիւն-  
ներ .

135 *քննութիւն*, *որոնց* 37ը *արզանդի բորբոքում* . 89ը  
*ձուարաններու բորբոքում* եւ *զանազան խանգարումներ*, *խն*  
*9ը յլութիւն* :

13.— Զգայարաններու հիւանդութիւններ .

77 *քննութիւն*, *որոնց* 26ը *աչքի*, 51ը *ականջի*, *քիթի* եւ  
*կոկորդի չիւանդութիւններ* :

14.— Վիրաբուժութիւն . 6 *պարագայ* :

15.— Զանազան հիւանդութիւններ .

85 *պարագայ* (*բերնի* եւ *ականներու չիւանդութիւններ*,  
*զիրութիւն*, *խօլիպի զանազան արկածներ* . *փայծաղի* եւ *չա-*  
*զանակազեղծի խանգարումներ*, *չաքարախտ* եւ այլն) :

16.— Փարիզի հիւանդանոցները ուղղուած հիւանդներ .

87 *պարագայ*, *ուր ձրխարար գտած* են *վիրաբուժական*  
*զարմանումներ* :

*Երբ ակնարկ մը նետենք վերոյիշեալ վիճակադրութեան*  
*վրայ*, *երեւան կուզայ* որ *մեր փարիզահայ չքաւոր զազու-*  
*թը կը ստառապի մասնաւորաբար մարտոզական գործարան-*  
*ներու խանգարումներէն* (*աղիքի* եւ *ստամոքսի*) *եւ շնչառա-*  
*կան գործարաններէն* (*մանաւանդ ցնցղատապէ*) , *երբորդ*





ԲՈՒՅԱԳԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԲՈՒՅԱԲԱՆՆԵՆ ՄԷ՞՞՞

կարգին կու դայ յօղացաւը: Արդարեւ այս երեք հիւանդութիւնները չքաւորութեան հեւեւանք են: Բարեբախտաբար այս տարի թոքախտաւորներու թիւը անցեալ տարուանին կէսը կը ներկայացնէ:

\*\*\*

1935էն ի վեր Հայ Պետական Կարմիր Սաշը ունի երկրորդ Բուժարան մը եւս, Պանիէօ — Քաշանի Մասնամիւղը (24, Ռիւ Ռօժէ, Պանիէօ — Սէն), հովանաւորութեամբ միշտ մեր բժշկապետին: Սոյն Բուժարանին մէջ 1936 տարուան ընթացքին կատարուած է 577 բժշկական քննութիւն, շարաթը անգամ մը, ամէն հինգշարթի առաւօտ եւ ամէն անգամին միջին հաշուով 18 հիւանդ քննելով, որոնց զեղերը նմանապէս ձրխարար արուած են Կեղրոնի Բուժարանէն:

Կատարուած վիճակագրական քննութիւնները երեւան հանած են.

- 1.— Շնչառական գործարանի հիւանդութիւններ.  
117 ախտաճանաչութիւն, 103ը ցնցդատապ, 6ը թոքախտ, եւ 8ը թոքային զանազան հիւանդութիւններ:
- 2.— Մարսողական գործարանի հիւանդութիւններ.  
100 ախտաճանաչութիւն, 18ը ստամոքսի, 73ը ազիքեւորու եւ 9ը լեարդի հիւանդութիւն:
- 3.— Արեան շրջանի հիւանդութիւններ.  
68 քննութիւն, որոնց 47ը գերճնչում:
- 4.— Ընդհանուր տկարութիւն եւ անարիւնութիւններ.  
83 պարապայ:
- 5.— Մանուկներու հիւանդութիւններ.  
138 ախտաճանաչութիւն, որոնց միայն 43ը կապոյտ հազ, 10ը ոսկրաթեքութիւն, 4 պարապայ պատուաստ (ծաղկախտի եւ կեղծմարչկի դէմ), 81ը մարտողական զանազան խանգարումներ, թերի սննդառութիւններ, փոխանցիկ հիւանդութիւններ:



ՍԳԱՍՄԱՆ ՍՐԱՀԻՆ ՄԵԿ ԱՆԿԻՆԸ ԻՐԵՆՑ ԿԱՐԳԻՆ ՍԳԱՍՈՂ ՀԻՌԱՆԳՆԵՐ

6.— Տարափոխիկ հիւանդութիւններ . 34 պարագայ :

7.— Յօդացաւեր . 36 պարագայ :

8.— Մորթային հիւանդութիւններ . 42 պարագայ :

9.— Զղային դուրեման կապուած հիւանդութիւններ .

40 պարագայ :

10.— Երիկամունքի եւ միզային ճամբաներու հիւանդութիւններ . 13 պարագայ :

11.— Կանանց սեռային գործարաններու հիւանդութիւններ . 34 *քննութիւն*, որոնց 20ը *ճուարաններու բորբոքում եւ զանազան խանգարումներ*, 9ը *արզանդի բորբոքում*, իսկ 5ը *յղութիւն* :

12.— Զգայարաններու հիւանդութիւններ .

20 *քննութիւն*, որոնց 5ը *աչքի* :

13.— Զանազան հիւանդութիւններ .

22 *պարագայ* (*բերնի եւ սկւաներու հիւանդութիւն*, *զիրութիւն*, *փայծաղի ու ալրուածքի արկածներ*) :

14.— Փարիզի հիւանդանոցները ուղղուած հիւանդներ .

13 *պարագայ* :

*Այս բոլոր արտաձանաչութիւններն ու դարձանումները կատարուած են Կեդրոնի Բուժարանին միեւնոյն կերպով :*

*Երբ Պանէէօյի վիճակագրութեան վրայ տկնարի մը նետենք, քիչ մը կը տարբերի Կեդրոնի վիճակագրութենէն : Հոս առաջին կարգին կու գան մանուկներու հիւանդութիւնները, ինչ որ վերադրելի է գաղութին ընտանեկան կեանքին : Այս մարդին մէջ կ'երեւի միայն 43 պարագայ կապոյտ հագի, որ յոյժ փոխանցելի հիւանդութիւն մըն է : Գաղութին մէջ 1936ի Փետրուար ամսոյն կապոյտ հագի համաճարակ մը տեղի ունեցաւ եւ տեւեց չորս ամիս : Երկրորդ կարգին կու գայ ցնցատապը, իսկ երրորդ կարգին՝ մարտդական գործարաններու խանգարումները :*

ՏՕԲԹ . Կ . ԿԷՊՎՃԵԱՆ

GRAND  
PARIS



ՔԻՄԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐՈՒ (analyses) ԵՆ ԳԵՂԵՐԸ  
ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՅԱՏՈՒԿ ՄԱՍՆԱՍԵՆԵԱԿԸ  
ԲՈՒԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ ՓԱՐԻ

Պես. Հ. Կարմիր Խաչի

ՄՈՒՏՔ

1 Փետրուար 1936 — 31 Յունուար 1937

Սնուկը պատրաստ դրամ 1 Փետր. 1936 ին.	7.886.30	
Նանուկեան Ֆոնտէն	5000.—	
Հանդէսներէ	9275.—	14.275.—
Փոխան ծաղկի նուէրներէ	2175.—	
Զանազան նուէրներէ եւ բաժնեգիններէ	4227.—	
Եկեղեցիի բռնուած պնակներէ	1232.90	
Ազգ. Հիւանդանոցի օրացոյցներէ	974.75	8.609.65

30.770.95

# ԶԻ ՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

## Օգնութեան Մասնաձևի

1 Փետրուար 1936 — 31 Յունուար 1937

ԵԼՔ

Պատճոհից եւ բժիշկներու ամսականներ		17.400.—
Զանազան նպաստներ	3455.—	
Գեղորայք	1831. 10	5.286. 10
Գիւտանական ծախսեր	1015. 65	
Տպագրական ծախսեր	75. —	
Թղթասարական ծախսեր	891. 25	1.981. 90
Հայաստանի համար դեղեր եւ բժշկ. բերքեր		3.682. 95
Զանազան մանր ծախսեր		561. 45
Գրասենեակի պիտոյք	109. 50	
Գրասենեակի կարասիք	27. 50	137.—
Փոխան բերքերու ծանուցմանց		200.—
Բժշկական բացառիկ այցելութեանց		140.—
Ազգ. Հիւանդանոց ղրկուած՝ փոխան օրա- ցոյցերու:		974. 75
		<u>30.364. 15</u>
1 Փետր. 1937ին սնուկը պատրաստ		406. 80
		<u><u>30.770. 95</u></u>

Փարիզ, 1 Փետր. 1937

Հաշուներն է՝

Վ. ԹԱԳԻՈՐԵՒՆ

Գանձապետ՝

Տօթթ. Պ. ՔՕԼՕԼԵԱՆ

ԾԱՆՕԹ.— Այս հաշուեկշռին մէջ չեն՝ 1 Փետրուար 1937ին ետքը տեղի ունեցած մուտքերը եւ ծախսերը:

## ԴԵՂԵՐՈՒ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Այստեղ չպիտի թուեմ Պետ. Հայ Կարմիր Խաչի Բուժարանին մանրամասն դործունէութիւնը, քանի որ բնկերս՝ Տօքթ. Կ. Կէօվճեանն ձեռնհասօրէն խօսած է այդ մասին, այլ պիտի ներկայացնեմ զեղերու վիճակը:

Մեր Բուժարանին մէջ անցեալ տարի դարձանուած հիւանդներու թիւն է, ինչպէս տեսնուեցաւ Տօքթ. Կ. Կէօվճեանի վերի համարատուութենէն, 5194: Բայց այս թիւը՝ բնականաբար զեղերու համար չէ, քանիոր հիւանդ մը՝ պարագային համեմատ դարձանելու համար՝ մէկ զեղով չենք բուժանացած, այլ երկու, երբեմն ալ երեք, զեղերով բնանաւորուած տուն դարձած է ան: Մենք ըսենք՝ միջին հաշուով՝ երկու զեղ, որու զուտարը կ'ըլլայ՝ 10,388 տեսակ զեղ: Այս զեղերը ձրիաբար արուած են Պետ. Հայ Կարմիր Խաչի Բուժարանէն, շարաթը երկու անգամ:

Հայ Եկեղեցւոյ կից Բուժարանէն դատ՝ Կարմիր Խաչը Մասնաճիւղ մըն ալ ունի Պանեկօյի մէջ, ուր շարաթը անգամ մը կը դարձանուին Կեղրոնական Բուժարանս զալու զժուարութիւն ունեցող հիւանդները, նոյն Տօքթ. Կէօվճեանի կողմէ:

Այս Մասնաճիւղը յաճախող 577 հիւանդներու զեղերը կը հայթայթուին Կեղրոնական Բուժարանէս. ուրեմն հոն ալ մատակարարած ենք տարեկան նոյնքան զեղ:

Մեր երկու Բուժարաններու հիմնադիր տնօրէնն ու պատասխանատու կաղմակերպիչն է Տօքթ. Պ. Քօլօլեան:

Բուժարանին Դեղագործը

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ





ԳԵՂԱՐՄԱՆԻ ԱՄԿ ԱՆՈՒՆԵՐ

Պ. 2. ԿԱՐՄԻՐ ԽԱԶԸ  
ԵՒ ՇԻՒԱՆԴԱՆՈՑՆԵՐՈՒ ՄԷՋ ԴԱՐՄԱՆՈՒՈՂ  
ՀԱՅ ՇԻՒԱՆԴՆԵՐԸ

Պ. 2. Կարմիր Սաշի կողմէ այս տարի հիւանդանոցներու մէջ այցելած եմ 63 հիւանդներու, որոնցմէ շատերուն մէկէ աւելի անդամներ, անոնց կողմէ եղած մասնաւոր խընդրանքին դրայ: Անշուշտ, ասոնցմէ դատ կան ուրիշ հիւանդներ ալ, որոնց շէնք կարողացած օգնութեան փութալ, սլարզապէս անոր համար որ անոնց հասցէները մեզի անձանօթ մնացած են:

Հայ հիւանդներու անունները ընդհանրապէս կ'ունենամ հիւանդանոցներու արձանագրութեանց տեարակներու միջոցաւ, ինչպէս նաև շնորհիւ այն նամակներուն զորս այս հիւանդները կը գրեն Պ. 2. Կ. Սաշի օգնութիւնը խնդրելու համար:

Այս տարուան զանազան հիւանդանոցներու եւ տուներու մէջ տեսած հիւանդներու 15ը (մեծամասնութիւնը կին) զործողութեան ենթարկուածներ են, 2 ստամոքսի ծանր հիւանդութեանց, 4 զանազան արկածներու հետեւանք, 1 թորախտաւոր փոքրիկ մը (ազաքինած), երկու ուրիշ աղաք, միւսն այն ընտանիքէ, մին լուսնոտ եւ միւսը զործողութեան ենթարկուած, 1 թորախտապ, 1 անդամալոյժ, իսկ մնացեալները՝ երկու սեռէ թորախտաւորներ:

Հայերու մեծամասնութիւնը կը դարձանունին Պիշաի, Քոչէնի, Լախէֆի եւ Լարիպուազիէոի հիւանդանոցներուն մէջ. միւսներուն մէջ Հայերուն թիւը աւելի նուազ են:

Մեր հիւանդներէն 3ը զժրախտաբար շկարողացան դիմադրել իրենց անդարձանելի հիւանդութեանց. մէկ մասը առողջացաւ, իսկ մնացեալները տակաւին կը դարձանունին. ա-

սոնց մէջ կը գտնուին հիւանդներ որոնք 6 - 7 տարիէ ի վեր հոն են: Այն հիւանդներուն, որոնց մասնաւորապէս այցելեցի Պ. Հ. Կ. Խաչի կողմէ, անոք եւ նիւթահան միջոցներէ զրկուածներն էին: Ասոնք աւելի շատ պէտք ունէին Կարմիր Խաչի օգնութեան եւ բարոյական աջակցութեան:

Աչքէս չի հետանար այն հայ հիւանդին հրճուանքը, երբ Մնունդի օրը զինքը տեսնել զացի. աչքերը ուրախութեան արցունքներով լեցուեցան: Պատճառը հարցուցի: Պատասխանեց թէ՛ «Այսօր Մնունդ ըլլալուն, որահին մէջ գտնուող բոլոր հիւանդները, առանց բացառութեան, այցելուներ ունեցան, ըլլայ իրենց ազգականները եւ կամ ուրիշ բարեսէր անձեր, որոնք շաքարներով եւ գանազան նուէրներով եկած էին զիրենք տեսնելու: Միայն ես էի առանձին, չունենալով ինձմով հետաքրքրուող մէկը: Պ. Հ. Կ. Խաչի ներկայացուցիչին անակնկալ այցելութիւնը ինձ մեծ ուրախութիւն պատճառեց. դո՛ւ եմ որ շուրջիներս պիտի տեսնեն թէ ես այ երեսի վրայ ձգուած առանձին մէկը չեմ եւ ունեցայ այցելող մը. մանաւանդ, Հ. Կ. Խաչի կողմէ ինձ բերուած պատուով լեցուած ծրար մը»:

Հայ տիկնոջ մը մասին, որ երկար ժամանակէ ի վեր կը գարմանուի Քօշէնի հիւանդանոցը, զինքը խնամող հիւանդապահուհին մեծ գովեստով խօսեցաւ եւ ըսաւ որ տիպար կին մըն է իր մաքրութեամբ, կարգապահութեամբ եւ աշխատասիրութեամբ: Զարմանքով տեսայ թէ այդ կինը իրեն տրուած առօրեայ կաթէն կարող չինամ էր, գուրսը ծախուածներուն նման, ինչպէս նաեւ մածուն պատրաստած՝ մեծ յաջողութեամբ: Ստամոքսը շատ հիւանդ ըլլալուն, անկարող եղած էր իրեն տրուած կերակուրները ուտելու, գժուարամարս ըլլալուն պատճառով: Իր պատրաստած մածունէն տրուած էր նաեւ իր շուրջի հիւանդներուն: Այդ տիպար Հայուհին իր առօրեայ ծախսերուն բաւելու չափ դրամ ալ չահած էր՝ նստած տեղը հիւանդներուն եւ հիւանդապահուհիներուն ձեռագործներ շինելով:

Կը յիշեմ ուրիշ պարագայ մը եւս, Քօշէնի հիւանդանոցին մէջ: Հիւանդ կին մը, ուղելով դիտնալ իր Ռատիօկրաֆի արդիւնքը, որ կ'երեւար իր մահճակալին ոտքի կողմը կախուած նշնատարտակին վրայ, Փրանսերէն չգիտնալուն, ցոյց տուած էր իր քովի Փրանսացի հիւանդին. ան ալ, անուս մը, աջ աղիքին վրայ նշանակուած գիծէ մը դատելով՝ ըսած էր թէ ունեցածը ափանտիսիտ էր: Խեղճ կինը գործողութեան մը ենթարկուելու հետապատկերէն սարսափած, կը դողար, իրեն այցելած միջոցիս: Երբ սխալած ըլլալնին ըսի, կնոջ ուրախութիւնը չափ չունեցաւ: Այդ կինը, զգացած ցաւերը Փրանսերէնով բացատրելու անկարող ըլլալուն, խնդրեց ինէ որ հայերէն տառերով Փրանսերէն գրեմ այդ բառերը, ինչպէս՝ ֆոխսն, պայքըման, ֆիէլոք, եւայլն, որ բժիշկին ներկայութեանը կարգայ:

Ուրեմն, բացայայտ կ'երեւի թէ՛ հիւանդանոցներու մէջ լքուած հայ հիւանդներուն համար որքա՞ն անհրաժեշտ է Պ. Շ. Կ. Թաչի ներկայութիւնը եւ անոր կատարած դերը որքա՞ն օգտակար է:

Պ. Շ. Կ. Թաչը աստիճան օրերուն իսկ չի մտնար իր հիւանդները. անոնք այս տարի եւս ունեցան անոր կողմէ այցելող մը եւ ստացան պոսուղ եւ շաքար. այնպէս որ, իրենց ստորեայ լեզի սուրճին եւ ստանց շաքարի կաթին անհամութիւնը նուազ զգալի եղաւ այդ օրը: Եթէ օր մը կարելի ըլլայ հրատարակել հիւանդանոցներու մէջ դոնուսող հիւանդներու կողմէ Պ. Շ. Կ. Թաչին ուղղուած բազմաթիւ շնորհակալական նամակները, որոնք իրենց երախտագիտական զգացումներուն անվերապահ եւ անկեղծ արտայայտութիւնը կը պարունակէ, այն ատեն միայն կարելի պիտի ըլլայ ճշդել այն դերը զոր Պ. Շ. Կ. Թաչը կատարած է եւ կը կատարէ անոնց խնամքի գործին մէջ:

Բարից, 20 - 2 - 1937

ԶԱՐՈՒ ՀԻ ԳԱԼՖԱԵԱՆ



ԲՈՒԺԱՐԱՆԻՆ ԲԺԻՇԿՆԵՐԷՆ ՈՒՐԱՆՔ, ԳԵՂԱԳՈՐԾԸ, ՀԻՎԱՆԳԱՊԱՀՈՒՀԻՆԵՐՆ ՈՒ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ  
 Ջախէն աջ, Կառէի կարգին վրայ՝ Տիկին Վ. Զարմիկեան (վերահսկող), Տիկին Կ. Բաւաճեան, Տիկին Լ.  
 Նուրիեան, Օր. Զ. Գալփայեան, Օր. Ա. Մալեգեան, Օր. Մ. Բուլնեան, Տաքր. Կ. Կէօլմեան  
 Առջևի կարգին վրայ՝ Ջախէն աջ՝ Տաքր Կ. Բաւաճեան, Տաքր. Կ. Խաննեան, Տաքր. Պ. Քօլօյեան,  
 Տաքր. Ա. Տէր - Անդրեասեան

## ՆՈՐԱԾԻՆՆԵՐՈՒՆ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿԱՔՈՎ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Նորածինին սնունդը կաթն է. դլխաւորաբար մօրը կաթը: Բայց երբ մօրը կաթը անբաւական է եւ կամ թէ իւր տրեկարութեան, անարիւնութեան եւ հիւանդութեան պատճառաւ՝ բժիշկի հրամանով՝ կաթ տալը իրեն արգիլուած է, այս պայմաններու մէջ ստիպուած է երախային դուրսէն կաթ տալու:

Կաթնաու բունելը ամենուն քսակին չի յարմարիր:

Զանազան տեսակ կաթեր կան: Իւր բաղադրութիւնով (composition) մօրենական կաթին յատկութիւնները ունեցող «իշուն կաթն է», սակայն այս կենդանիին կաթը ձարելը դորձնականապէս դժուարին է, եթէ ոչ անհնարին: Նախ որ էջը իւր կաթը ձաղին կը պահէ եւ ասոր համար անկարելին կ'ընէ ուրիշի շտալու համար:

Անմիջապէս վերջը կուղայ կովուն կաթը, որ թէեւ իւր բաղադրութիւնով մայրենական կաթին չի նմանիր, պէտք կ'ըլլայ անոր բացէն շաքար եւ ջուր խառնել, դոնէ առաջին վեց ամիսներուն երախային սննդաուութեան համար:

Ամէն պարապային մի՛ մտնաք որ կովուն կաթը իր հորթին համար է:

Կովուն կաթը երբեք հում տալու չէ երախային. սրով-հեաւ փամեղաւոր եւ փնասակար ալ է:

Այժի կաթը յարզի արժանի կաթ մը չէ: Կան պահածոյ կաթեր, առանց շաքարի կամ շաքարով. ասոնք պարազանե-

բու համեմատ չափ օգտակար կրնան ըլլալ, մանուանդ աղ-  
քառ դասակարգի համար :

Ահա է ինչպէս պատրաստելու է երախային տրուելիք  
կոլու կաթը : Հրատարակի վրայ կը դանուին յատուկ շի-  
շեր, որոնց վրայ դուրսէն բաժանումներ կան . շիշերուն  
քանակութիւնը 150 - 200 կրամ է . իւրաքանչիւր բաժանում  
25 կրամի կը համապատասխանէ :

Կան նաև այս շիշերը պարունակող յատուկ սպասներ  
(appareils) - գործիքներ, Soxhlet, Laroche անուննե-  
րու տակ :

Պէտք է ըսեմ եւ պնդեմ մասնաւոր եւ էական կէտի մը  
վրայ. — « Պէտք է այս շիշերը գործածելէ առաջ դանոնք  
հականերխել (stériliser) » : Ահա թէ ինչպէս . շիշերը  
ամանի մը մէջ դնել . ամանին պաղ ջուր լեցնել եւ ջուրը ե-  
փել անուազն 5 վայրկեան . ձգել որ ջուրը պաղի . խնամով  
շիշերուն ջուրը թափել (մաքուր ձեռքերով) եւ շիշերը պիտի-  
վայր դնել :

Կաթը հականերխելու յատուկ սպասներուն ( Soxhlet ,  
Laroche ) նկարագրութիւնը :

Մեծկակ մետաղեայ կաթնայ (աման) մը, որուն կա-  
փարիչը վերցնելուն, մէջը պիտի գտնէք շիշերը տեղաւորե-  
լու յարմար ծակեր . սպասին այս ներքին մասը՝ շիշերով՝  
կարելի է կաթնայէն հանել : Շիշերը հականերխուած են :  
Ապակիէ entonnoir ով (ձագարով) եփած կաթը լեցնել  
մինչեւ այն բաժանումը որ պէտք է . յետոյ, քառչուկէ մաս-  
նաւոր խիցեր (պուշօն), որ առաջուրնէ կփուած են, դնել  
բոլոր շիշերուն վրայ : Այս ամենը բնելէ վերջ՝ ամբողջու-  
թիւնը նորէն ամանին մէջ տեղաւորել . յետոյ ամանին բոլոր-  
աիքը պաղ ջուր լեցնել մինչեւ շիշերուն կաթին բարձրու-  
թիւնը . ամանը կափարիչով գոցել եւ մէջի ջուրը եփել 5 - 10  
վայրկեան . եփելէ յետոյ կափարիչը բանալ, շիշերը դուրս  
հանել եւ ձգել որ անոնք պաղին ինքնիրեն : Այս կերպով շի-

շերուն օդը տաքնալով դուրս կ'ելլայ (ջուրին շոգիտվը) և անոնց վրայի խիցերը (պուշօն) դուրսի օդին ճնշումին տակ լաւ մը կը գոցուին և կը մնան գոց, մինչև այն վայրկեանին որ հարկ կ'ըլլայ մէկիկ մէկիկ դորձածել զանոնք, ըստ պիտոյին :

Շիշերուն կաթը հակահետուած, պատրաստ է. երախային կաթ տալու որոշ ժամուն (քիչ մը վերջը պիտի բսննք թէ ս<sup>օ</sup>ր ժամերուն), անմիջապէս պէտք եղած քանակութեամբ ջուր եփելու է, մէջը կտոր մը շաքար և կամ սուրճի դգալ մը փոշի շաքար դնելու է. այս շաքարոտ եփած ջուրը աւելցնել հակահետուած կաթ պարունակող շիշին մէջ. որով կաթն ալ տաքուկ կ'ըլլայ: Բնականաբար շիշին բերանը անաջուրնէ կփուած tétine-ը (բէրիւնը) անցրնելով երախային բերանը տալու է. biberon-ը (պիպրօնը) այսպէս պատրաստուած ի՞նչ գիրք տալու է երախային կերակրելու համար: Երախան պատկած գիրքի մէջ կերակրելու չէ, այլ մօրը կամ կաթ տուողին ձախ թելին վրայ առնել ու զրրկելու է, գլուխը վերօք, մօրը կուրծքին կոթնած. աջ ձեռքով պիպրօնը բռնելու է, այնպէս որ երախան կաթին հետ օդ չի կլլէ:

Նորածինին առաջին 2½ ժամերուն 2 - 3 դգալ եռացած<sup>6</sup>, շաքարոտ ջուր միայն տալու է և ոչ կաթ. յետոյ առաջին եռամսեային 2/3 կովու կաթ և 1/3 շաքարոտ եփած ջուր. երկրորդ եռամսեային՝ 3/4 կովու կաթ և 1/4 եռացած շաքարոտ ջուր. իսկ վեց ամիսէն սկսեալ՝ զուտ կովու կաթ, միշտ հակահետուած:

Առաջին ամիսը նորածինին 2 - 2½ ժամը անգամ մը կաթ տալու է, իսկ վերջը՝ 3 - 3½ - 4 ժամը անգամ մը. գիշերը Գէն առտուն 5 - 6ը կաթ տալու չէ. հակառակ երախային լացերուն այս ժուամերը անփոփոխ պահելու է: Քիչ մը համբերութիւնով կարելի է այս արգիւնքը ձեռք բերել: Այս կեր-



սով երախային միջոց կը տրուի առած կաթը մարսելու ժամանակ տալով. հակառակ պարագային, անմարսողութեան, փոխումներու ենթակայ կ'ըլլայ:

Երախային առողջութեան տեսակէտով ամենէն վտանգաւոր ամիսներն են Յունիս, Յուլիս, Օգոստոս եւ Սեպտեմբեր, որովհետեւ ամառուան տաք եղանակին կաթերը շուտով կ'աբուին, կը թթուին. տաք եղանակին է որ երախաները սովորաբար փորհարութեան (diarrhée), մանաւանդ կանանց փորհարութեան (diarrhée verte) cholérine-ի, gastro-entérite ըստած հիւանդութեանց ենթակայ են. եթէ խրնամով չղարմանուին, կրնան մինչեւ իսկ այս հիւանդութիւններուն զոհ երթալ, մանաւանդ եթէ հականեխեալ կաթով չկերակրուին, ինչպէս վերը երկարորէն նկարագրեցինք:

Կաթը հականեխելէ վերջը զով, եթէ կարելի է, պաղ տեղ պահելու է. մանաւանդ ամառուան տաքին:

Անոնք որ կաթին հականեխումի յատուկ սպանները (գործիքները) առնելու միջոցները չունին, անոնց համար կարելի է կոփու քարլ եւ անարատ կաթ ճարել (գժրախտաբար հրապարակի վրայ գանուոյ բուր կաթերը յանձնարարելի չեն) եւ մաքուր ամանով եփել. սակայն զիտցէք՝ «կաթին փերփուրը ամանէն բարձրանալուն պէս վար մի՛ առնէք», այլ եփած զգալով փրփուրը պայթեցուցէք եւ առեն մը եւս եփեցէք, ամենէն քիչը 5 վայրկեան եփելու պայմանաւ:

Կաթը այս կերպով եփելէ վերջը պաղ տեղ պահել, վերան զոցելով. երախային տալէ առաջ վրայի սերը մէկգլի առնել, պիպրոսօսին մէջ պէտք եղած կաթի քանակութիւնը լեցնել եւ անոր վրայ եփած շաքարոտ ջուր լեցնել, պիպրոսին վրայ եփած ջուրի մէջ պահուած քէրիկը անցրնել եւ երախան կերակրել: Օրը մի քանի անգամ երախային բերանը՝ լինտերը, լեզուն եւ բոլորախիբը մաքրել. ահա թէ ի՛նչ-

պէս : Դրայի մը կաթին բամպակ ժաթթեւի եւ թաթիւի eau bicarbonatée կամ boratée ( 4 առ հարիւր ) ի մէջ եւ անոյ պատոցնել, չփել բերնին մէջ, որպէսզի սամկորէն կոչուած «բամպակ» (դիտականօրէն muguet ) ըսուած հիւանդութեան չենթարկուին : Երախան պիպրոսի կաթը ընցնելէ վերջը պէտք է շիշը, քէքիցը ջուրի մէջ եփել եւ յետոյ եփած ջուրի մէջ անոնք պահել :

Մայրե՛ր, ծնողքնե՛ր, չոր կաթնասունե՛ր (nourrices sèches) ուշադրութեամբ կարդացէք վերոյիշեալ հրահանգները, խրատները, եթէ կ'ուզէք ձեր հոգեհաստը ձազուկները ողջ եւ առողջ մեծցնել :

ՏՕՔԹ . Կ . ԽԱՆԾԵԱՆ

## ՍՏԱՄՈՔՍԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Ստամոքսը բլլալով մեր ներքին զործարաններուն ամենակարեւորագոյնը, անոր հետ պէտք է վարուիլ շատ զգուշ, չյոզնեցնելով զայն, սալով աւելորդ եւ անժամանակ ուտելիք ու խմելիք:

Յաճախ երբոր տեղոյն եւ նիհարակազմ մէկու մը հանդիպին, իրենց սուսջին եւ սխալ խորհուրդը կ'ըլլայ ստիպել որ ուտէ եւ շատ ուտէ, որպէսզի զիրնայ, սակայն բնաւ չեն հարցներ թէ ստամոքսը կը տանի՞ կերածը, այսինքն կրնա՞յ մարսել:

Եթէ ստամոքսը ի վիճակի չէ մեր տուած ուտելիքը կամ խմելիքը մարսելու, հետեւաբար զայն փոխանցելու որպէս սնունդ, ինչո՞վ օգտակար կ'ըլլայ մեր տուածները:

Ինչպէս որ չենք կրնար ստիպել մէկը որ իր կարողութենէն վեր բնւ մը տանի, նոյնպէս ալ ստամոքսին պէտք չէ տանք այնպիսի ուտելիք եւ խմելիք որ պատճառ ըլլայ իր խանգարումին:

Արդէն ստամոքսէ տառապողները անմիջապէս կը զգան թէ ի՞նչ պէտք է ուտեն կամ ի՞նչ պէտք է չուտեն. եթէ կերան ու խմեցին բան մը որ ստամոքսը չի մարսեր, կ'ըսեն՝ «ստամոքսիս վրայ կարծես քար մը կայ, զարվար չերթար, փորս պալօնի պէս կ'ուսի, կերածս կը քայտի», եւլն., եւլն.:

Ահա ասոնց պատճառներէն մեծագոյնը յառաջ կուգայ անյարմար ու անժամանակ ուտելիքէ եւ խմելիքէ:

Ուրեմն մեր պարտականութիւնն է չյոզնեցնել մեր ստամոքսը. ահաւասիկ պայմանները:

Առաջին, շատ կարեւոր է կերածը լաւ մը ծամել: Ծա-

մելով նախ ակուսներուն հուտանք ուժ, որովհետեւ անոնք որոնք լաւ չեն ծամեր եւ կամ միայն մէկ կողմով կը ծամեն, անոնց ակուսները ընդհանրապէս կը փտաին:

Ակուսները ըլլալով մեր աղօրին, կը մանրրցնեն մեր պատանները եւ բերնին մէջ գանուած հոյզը խաւնուելով մեր ուտելիքին, արդէն բերնին մէջ իսկ մարսողութեան առաջին շրջանը սկսած կ'ըլլայ:

Եթէ չծամենք կամ քիչ ծամենք ու կըլլենք, ստամոքսը այդ առաջին ծանր պարտականութիւնն ալ իր վրայ կ'ստնէ ժամանակի մը համար, ընելով աւելորդ շարժումներ ու արտադրելով աւելորդ հոյզեր. թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ պարզային տուժողը պիտի ըլլայ ստամոքսը, այսինքն մենք:

Եթէ մեքենայի մը ամէն մէկ մասնիկը իր պարտականութիւնը չկատարէ, այդ մեքենան խանգարումներ կ'ունենայ եւ յետոյ կամաց կամաց կը դադրի գործելէ, որով մեր ամբողջութիւնն ալ ըլլալով մեքենայ մը, եթէ ուշադրութիւն չընենք պարզ եւ սակայն շատ կարեւոր առողջապահական յետոյ հիւանդութիւն:

կանոններու, արդիւնքը կ'ըլլայ նախ անհանդստութիւն եւ

Առողջապահութիւնը մեզ համար ընդհանուր կանոն է. անոնք որոնք կը չեղին այս ընդհանուր կանոնէն, կանուխ կամ ուշ պիտի տուժեն:

Շատ անգամներ կը տեսնէք ձեր շուրջը ստամոքսի հիւանդութենէ տառապողներ, որոնք ընդհանրապէս կ'ըլլան նեղսիրտ, բարկացոտ եւ ընդհանուր կերպով բարոյալքուած. չեմ խօսիր այստեղ ստամոքսի հիւանդութենէ տառապողներու սարսափելի վիճակի մասին:

Երկրորդ, ուտել որոշեալ ժամերուն, եթէ չենք ուղեր խանգարել մեր մարսողական գործարանները: Ստամոքսը ունի վերիվերոյ իր որոշ աշխատանքի ժամանակը, մեզի կը մնայ այդ ժամանակները որոշել եւ ըստ այնմ աշխատցնել:

Ամէն օր որոշեալ ժամերուն ճաշելու է եւ ճաշերէ դուրս պէտք չէ ուտել, որորվհետեւ ստամոքսին համար կրկին ու կրկին աշխատանք մըն է այսպէս անկանոն ճաշերը, որուն արդիւնքը կ'ըլլայ խանդարում, հոյզերու աւելորդ վատնում, աղիքներու շարժման բնական վիճակի խանգարում, որով ընդհանրապէս պնդութիւն, արդիւնքը հիւանդութիւն:

Ահա երկրորդ կանոն մը առողջապահութեան:

Երրորդ, ճաշերու ժամանակ ջուր չխմել կամ քիչ խմել: Ստամոքսը նմանցնելով կերակուրով լեցուն սանի մը, երրորդ աշխատանքին մէջ կերակուրը եփած միջոցին պաղ ջուր լեցնենք, անմիջապէս կերակուրը կը պաղի, եւ ստիպուած կրկին ժամանակ պէտք է տալ որ առաջուան տաք վիճակին հասնի. ուրեմն հասկնալի է որ երրորդ ճաշած միջոցին ջուր խմելու ըլլանք, ճիշդ ինչպէս սանին մէջի կերակուրը նոյնպէս եւ ստամոքսը եւ ստամոքսին հոյզերը պարապ տեղը աշխատուցած ու վատնած կ'ըլլանք, եւ այսպէս ժամանակի ընթացքին կազերու եւ քաղցրումներու տեղի կուտանք:

Չուրը խմել մօտաւորապէս 3 ժամ յետոյ, որովհետեւ աշխատանքին ստամոքսը գրեթէ պարպուած կ'ըլլայ:

Որով կը տեսնենք թէ այս երեք պարզ կանոններուն չը հետեւողները, առանց այլեւայլի կ'ունենան յաճախ մարսողական գործարաններուն նախ անհանդատութիւն, յետոյ քրոնիկ դարձած հիւանդութիւն, հիւանդութիւն մը որ շատ անգամ սարսափելի տառապանքներով մեզ դէպի մահ կ'առաջնորդէ:

Այս պարզ եւ սակայն շատ օգտակար կանոններէն դատ կան նաեւ ուրիշ պատճառներ, սակայն տեղի անձկութեան պատճառաւ ստիպուած պիտի ըլլամ յարմար առիթի մը ձգել:

ՏՕՔԹ. Ա. ՏԷՐ - ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Հիւանդութեանց դէմ ինքնապաշտպանութեան ամենէն դիւրին միջոցն է հիւանդ չըլլալ: Իսկ հիւանդ չըլլալու համար՝ մեր աստղջութեան վրայ պարտաւոր ենք հսկել, հիւանդութիւնը դեռ չեկած: Ասոր համար ալ՝ տոողջապահական կանոններ կան, բժիշկներու կողմէ հաստատուած, որոնց պէտք է հնազանդիլ կէտ առ կէտ, աւանց դանդաակուի:

Բայց, հակառակ ամէն զգուշութեան, եթէ աննշան կարծուած փոքրիկ ցրտասութիւն մը՝ դոզ մը զգաք, ձեր առաջին դործը պիտի ըլլայ տաք բան մը խմել եւ տաքուկ տաքուկ պառկիլ:

Ոմանք կը կարծեն թէ՝ «տաք բան մը» ըսելով՝ անպատճառ քէյ խմել կը հասկնան: Ո՛չ: Լաւազոյն է քիչ մը քմբի (օրլամուր, tilleul) առնել եւ թէյի նման եփելէ ետք խմել:

Եթէ թեթեւ հազ մը ունիք, «Չորս ծաղիկներ»ը (quatre fleurs pectorales) միւսնոյն կերպով պատրաստելէ ետք՝ օրական 3 - 4 անգամ սուրճի դուաթով կը խմէք: Մէկ լիդրս եռացող ջուրին՝ 10 կրամ ծաղիկ կը բաւէ:

Փոքրիկներու հազին համար՝ դեղարանէ մը քիչ մը «Հազի շրուպ» (Sirop pectoral) կ'առնէք, եւ պղտիկ սուրճի զգալով՝ օրական 2 - 3 զգալով կուտաք:

Եթէ ստամոքսի ցաւէ կամ դժուարամարսութենէ կը տատապիք՝ կերակուրի ժամանակ բա՛ն մը չէ՛ք խմեր, այլ կերակուրէ ետք՝ մէկ - երկու հաս Երեցուկ (փափաքեայ, camomille) կամ թէյ Անանուխի (նանէ, menthe) երկու տերեւ՝ թէյի նման քիչ մը ջուրով կ'եփէք եւ սուրճի գաւաք մը կը խմէք անկէ, տաք տաք:

Կարևոր է գիտնալ, թէ ստամոքսի խանգարում ունեցողները՝ կերակուրի ժամանակ հեղանիւթ խմելու չեն երբեք. ո՛չ գինի, ո՛չ դարեջուր եւ ո՛չ խիչ ջուր:

Աւազրութիւն ընելու է՝ ամէն օր «փորը հանելու»: Եթէ օր մը փորերնիդ չելլայ, յաջորդ օրը պէտք է որ Bourdaine կոչուած արմատին կարուածներէն առնէք եւ խաշէք ու խմէք: Մէկ սուրճի դդալ Bourdaine-ի համար՝ դաւաթ մը ջուրը կը բուէ: Իրիկունը կը խաշէք, առտուն բարակ լաթէ մը անցընելէ ետք կը խմէք:

Թոքերու եւ ուղեղի բորբոքումին դէմ, հասարակ հազի դէմ, կամ թէ կուշար՝ կողերը տաքցնելու համար՝ դրոսն կը գործածուի Մանանեխ (հարսալ, moutarde):

Գլխու տաքութեան դէմ՝ սոքերը կէս ժամ տաք ջուրի մէջ կը դնէք, նոյն ջուրին մէջ ափ մը մանանեխ պարունակող քտակ մը ձգելով:

Թէ՛ կողերը տաքցնելու համար, թէ՛ թոքերու բորբոքումի եւ հազի դէմ՝ պատրաստ մանանեխած թուղթեր (Papier Rigollot) կան: Ասոնցմէ երկու հատը գաղջ ջուրի մէջ թրջելէ ետք՝ դեղ ունեցող կողմը մարմինին վրայ կը դրնէք 5 վայրկեան կամ աւելի, մինչեւ որ այրիլ սկսի. յետոյ կամացուկ մը կը հանէք, եւ տեղը՝ գաղջ ջուրի մէջ թրջած լաթով մը եւ կամ սպունդով կը սրբէք:

Ամէն պարապայի տակ՝ այս խրատներով մի գոհանաք եթէ հիւանդութեան նշաններ կան, ինչպէս՝ տաքութիւն, ուժով հազ, ստամոքսի ծանր ցաւ եւ այլն: Այն առեւն՝ դիմեցէք անմիջապէս «Բուժարան» եւ կամ ձեր բժիշկին:

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ  
Գեղագործ Բուժարանի

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան Պետական Կարմիր Խաչի Օգնութեան Մասնաճիւղը բրաւ իր պարտականութիւնը տարի մըն ալ :

1922էն ի վեր, Իգմիրի մեծ աղէտին հետեւալ օրերը, դաղթականները սկսան հասնիլ Փարիզ ու լեցուիլ Եկեղեցիին բակը : Լուրը ասինք : Գացինք ու տեսանք այն խեղճերուն վիճակը, անօթի, հիւանդ, առանց հաղուտի : Պետ. Կարմիր Խաչի Օգնութեան Մասնաճիւղը վերջապէս մարմին առաւ :

Տիկին Անայիս կ'ըսէ մեր յառաջարանին մէջ. — «Առաջին անգամ երբ գործով զեղուն հոգի մը հակեցաւ առաւելողի մը ցաւին վրայ... այն բողէէն իսկ գոյութիւն առաւ Կարմիր Խաչը» :

Պէտք էր, ուրեմն, քանի որ գոյութիւն ունէինք, խնամել հիւանդը, կերակրել անօթին, հաղուեցնել բողիկը, ազատան գտնել աուն շունեցողին :

Այդ բողէէն սկսեալ բրինք մեր պարտականութիւնը. այդ օրէն իսկ խնամեցինք մեր հիւանդները, պահպանեցինք ու կերակրեցինք : Մեր հին հաշուետուութեանց մէջ առւած ենք բոլոր այս մանրամասնութիւնները :

«Բուժարան»ը գոյութիւն ունի ուրեմն 15 տարիէ ի վեր : Բոլոր այս տարիներու բոլորումին բրինք մեր բոլոր ճիգերը՝ օգնելու մեր դժբախտներուն ու օգնելու Երեւանի Պետական Կարմիր Խաչին :

1936ին 5000էն աւելի հիւանդներ խնամած ենք : Մեր բոլոր խնամած հիւանդութեանց շարքին առաջինը միշտ Թոքային հիւանդութիւններն են :



Տօքթ. Կէօվճեան կը ներկայացնէ մեզի հիւանդութեանց ցանկը եւ ուրախութեամբ ցոյց կուտայ թէ այս տարի պահաս թոքախտաւորներ տեսած ենք:

Որքան ալ քիչ տեսնուի՝ դարձեալ շատ է:

Թոքախտը, որուն դէմ ամբողջ քաղաքակրթեալ աշխարհը կը պայքարի, մարդկութեան ամէնէն մեծ թշնամին է:

Թոքախտին դէմ պայքարելու ամէնէն պարզ եւ ուժով միջոցը բաց օդէն շփախնալն է: Մեր դպրոցականները կը բրնակին, դիտենք, պզտիկ սենեակներու եւ տաղաւարներու մէջ. բայց, դժբախտաբար, ամառ ձմեռ պատուհանները դոց կը մնան: Բացէ՛ք ձեր պատուհանները, մե՛ծ բացէ՛ք. հոն ուր օդը եւ արեւը կը մտնայ, քոքախտը չի՛ մտնար: Ո՞վ մեզի պիտի հաւատայ:

Պզտիկները խնամելու համար Տօքթ. Ստանճեանի տուած խրատները շատ բրաքի՛ք են: Հետեւեցէ՛ք անոնց, մայրեր:

Ստամոքսի հիւանդութիւնները շատ կը պատահին Հայերու մէջ: Մի՛ կարծէք թէ սնունդին տեսակէն կուզան անոնք:

Տօքթ. Տէր Անդրէասեան ձեզի կը բացատրէ: Ստամոքսի հիւանդութիւն չունենալու համար շատ կամայց ուտելու եւ շատ լուծամելու է: Ծառ ուտելը աղէկ չէ: Կամայց ուտել, քիչ ուտել, աղէկ ծամել, ժամանակին ուտել ու շարժիլ եւ քիչ ջուր խմել ճաշի ատեն: Ահա կարեւոր կէտերը:

Ձգային դրութեան հիւանդութիւնները նմանապէս շատ կը պատահին մեր գաղութին մէջ: Անոնց մասին ալ կ'ուղէինք տալ մեր պատուէրները: Տեղւոյ անձկութեան համար ապագային կը ձգենք:

Մեր հիւանդներէն շատերը, որոնց մասին կ'ուղենք կատարեալ քննութիւն, կը զրկենք հայասէր ու մեզի ծանօթ ու բարեկամ բրօքէսէօրներու service ին: Հոս պէտք է կատարենք մեր շնորհակալութեան պարտականութիւնը:

Les Professeurs Carnot, Lœper, Laignel - Lavastine, Gosset, Besançon, Abrami, Laubry et les Docteurs Tré-

molières, Gutmann, De Martel ont toute notre reconnaissance pour tous les soins qu'ils procurent à nos indigents malades.

Պետ. Հայ Կարմիր Սաչը իր դրամական շատ անձուկ պայմաններով կրցաւ ուրեմն պատուական գործ տեսնալ 1936ին :

Մեր դրամը քիչ է, բայց աշխատելու եւ գործելու փափաք ունեցողներուն թիւը, որոնք մեր շուրջը կը հաւաքուին, մեծ է : Մեր յաջողութիւնը անոնց կը պարտինք :

Կարմիր Սաչը գթութեան սրբազան գործ մըն է :

Քաղաքականութեամբ չենք զբաղիր : Հիւանդը խնամելը, երախան առողջ մեծցնելը, տկարին օգնելը, հիւանդ ազքատին հաց ու կաթ տալը նուիրական գործունէութիւն մըն է . այսինքն՝ մարդկութեան նոր հաւատքը : Այս դարուն մէջ, ուր ետասիրութիւնը, դրամին սէրը, շուտ հասնելու եւ աշխարհի մէջ տեղ գրաւելու բուն ետանդը կը մեռցնեն դանդաղօրէն մարդկային ամէնէն բարձր զգացումը, այն է՝ տառապանքին նկատմամբ գթածութիւնը : Կան բարեբախտաբար անձնուէր հոգիներ, որոնք Կարմիր Սաչի միջոցաւ մոռցնել կուտան մարդկութեան յիշեալ յստի կողմերը : Ահա հրաշափառ գործը Կարմիր Սաչին :

Ամէն հայ, ինչ հոգեբանութիւն ալ ունենայ, պէտք է Հայ Կարմիր Սաչին կապուի անվերապահօրէն : Ամէն ուր որ Հայեր կան, պէտք է Պետ. Կարմիր Սաչեր կաղմեն : Կարմիր Սաչը, գթութեան մեծ գործը, ամօքիչ ու բարեբար, յուրեալ ու տառապող մարդկութեան նոր հաւատքն է, հանդարտ ու յուսատու :

ՏՕՔԹ . ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ

## ՏԻՐՈՒՆԻ

Տեղեկագիրս մամլոյ տակ էր, երբ Վարչութիւնս տեղեկացաւ մահուանը՝ իր երկու եռանդուն, անձնուէր եւ հաւատարիմ գործակիցներուն, ողբ. Տեաք Յակոբ Պոյաճեանի եւ Տօքթ. Հ. Թաթարեանի:

Պետ. Հ. Կարժիր Սաչի Վարչութիւնը երախտագիտական պարտք կը համարի յիշատակել այս երկու պատուական անձնաւորութեանց կտրուստը, որ իրազէս զգալի է մեր Բուժարանին եւ անկէ օգտուող հայ աղքատ հիւանդներուն համար:

Յարգանք իրենց յիշատակին:

